ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

19.09.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/9 գնման պայմանագրի

ք. Երևան 17.11.2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՌԲԱ» ԱԿ-ն (Գործընկեր-1), ի դեմս նախագահ Ա. Մարգարյանի, «ԷԿՈ ՍԻԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (Գործընկեր-2), ի դեմս տնօրեն Գ. Կյուրեղյանի և «ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ-ն (Գործընկեր-3), ի դեմս տնօրեն Ա. Բաղդասարյանի (այսուհետ երեքը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 10.09.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, երեքը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման մնացորդային աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 19.09.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/9 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագիրը 5.1.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30 տոկոսի չափով, բանկային երաշխիքի առկայության դեպքում Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կապալառուին կանխավճար կարող է հատկացվել յուրաքանչյուր բյուջետային տարվա համաձայնագրով սահմանված վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցի գումարի մինչև 30 տոկոսի չափով:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի (համաձայնագրի) ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Ընդ որում, եթե կանխավճարը գերազանցում է 10 տոկոսը, ապա կանխավճարի մարման ենթակա գումարի վերջին չափին ավելացվում է հետևյալ բանաձևով հաշվարկված գումարը՝ ԱԳ=ԿԾ*ՊՏ՝

ԱԳ – ավելացվող գումար,

ԿԾ – պետության կողմից տրամադրվող կանխավճարի ծավալ, որը գերազանցում է 10%–ը,

ՊՏ – պետական տարեկան պարտատոմսերի վերջին երեք տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության մակարդակ:»:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը բաղկացած է 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047389
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
Գործընկեր-1
«ԷՌԲԱ» ԱԿ
ք. Դիլիջան, Կալինինի փ, 2-րդ նրբ, թիվ 16
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Դիլիջանի մ/ճ
Հ/Հ՝ 220403330172000
ՀՎՀՀ՝ 07902696

Նախագահ՝

_____ Ա. Մարգարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Գործընկեր-2
«ԷԿՈ ՍԻԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք.Երևան, Շենգավիթ թաղամաս,
Ս. Տարոնցի նրբ, շ.10 բն. 3
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220043331648000
ՀՎՀՀ 02279611

Տնօրեն՝

_____ Գ. Պողոսեան
(ստորագրություն)

Կ.Տ.

Գործընկեր-3
«ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա,
Լենինգրադյան փ. 23/07
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220043332430000
ՀՎՀՀ 05019792

Տնօրեն՝

_____ Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)

Կ.Տ.